



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ը

03 փետրվարի 2016 թվականի №131Ա


ՎԱՌԵԼԻՔԻ, ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԳԼԽԱԴԱՍԱՅԻՆ
ԶՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՅՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՀԱՇՎԻՆ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԶԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԻ՝
ԱՅՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2015 թվականի
դեկտեմբերի 15-ի №1217-Ա որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության 2017
թվականի պետական բյուջեի մշակման գործընթացի՝ Հայաստանի Հանրապետության 2017-
2019 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և Հայաստանի
Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման աշխատանքների
իրականացման ժամանակացույցի (այսուհետ՝ ժամանակացույց) 3-րդ կետը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել վառելիքի, էներգետիկայի և բնական պաշարների ոլորտում
գլխադասային չհանդիսացող Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման
մարմինների կողմից իրականացվելիք ծրագրերի գծով Հայաստանի Հանրապետության 2017-
2019 թվականների պետական բյուջեների միջոցների հաշվին կատարվելիք ծախսերի
ֆինանսավորման նախնական չափաքանակների՝ այդ մարմինների հետ քննարկման կարգը՝
համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկայի և
բնական պաշարների նախարարի տեղակալ Լ.Շահվերդյանին:



ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ

ԿԱՐԳ

ՎԱՌԵԼԻՔԻ, ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ
ԳԼԽԱԴԱՍԱՅԻՆ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ
ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԾԱԽՍԵՐԻ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԻ՝ ԱՅԴ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ՀԵՏ ՔՆՆԱՐԿՄԱՆ

1. Սույն կարգը մշակվել է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2015թ. դեկտեմբերի 15-ի №1217-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մշակման գործընթացի՝ Հայաստանի Հանրապետության 2017-2019 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման աշխատանքների իրականացման ժամանակացույցի (այսուհետ՝ ժամանակացույց) 3-րդ կետը:
2. Սույն կարգով սահմանվում է վառելիքի, էներգետիկայի և բնական պաշարների ոլորտում /այսուհետ՝ Ոլորտ/ գլխադասային չհանդիսացող ՀՀ տարածքային կառավարման մարմինների կողմից Ոլորտում ՀՀ 2017-2019թթ. պետական բյուջեների միջոցների հաշվին կատարվելիք ծախսերի ֆինանսավորման նախնական չափաքանակների՝ այդ մարմինների հետ քննարկման և ներկայացման կարգը:
3. ՀՀ տարածքային կառավարման մարմիններն իրենց կողմից Ոլորտում իրականացվելիք ծրագրերի գծով ՀՀ 2017-2019թթ. պետական բյուջեների միջոցների հաշվին կատարվելիք ծախսերի ֆինանսավորման նախնական չափաքանակները քննարկում են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության /այսուհետ՝ ԷԲՊՆ/ հետ՝ 2016թ. փետրվարի 22-ից 26-ը /ըստ մարզերի հայեցողության/:
4. Քննարկումների արդյունքում ձևավորված չափաքանակների հիման վրա՝ ՀՀ տարածքային կառավարման մարմինները կազմում և մինչև 2016թ. մարտի 28-ը ԷԲՊՆ են ներկայացնում Ոլորտի գծով իրենց 2017-2019թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրերի /այսուհետ՝ ՄԺԾԾ/ հայտերը՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակված «ՀՀ 2017-2019թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ՀՀ 2017թ. բյուջեի նախագծերի մշակման շրջանակներում ոլորտային հայտերի կազմման և դրանք ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացման մեթոդական ցուցումներ»-ի:
5. Սույն կարգի 4-րդ կետի համաձայն Ոլորտի գծով ԷԲՊՆ ներկայացված ՄԺԾԾ հայտերը նախարարությունն՝ որպես գլխադասային մարմին, ամփոփում և իր՝ 2017-2019թթ. ՄԺԾԾ հայտի հետ միասին ներկայացնում է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ մինչև 2016թ. մայիսի 27-ը:

6. Ժամանակացույցի 16-րդ կետի համաձայն՝ ՀՀ վարչապետի մոտ Ոլորտի գծով ՄԺԾԾ հայտերի շուրջ քննարկումների արդյունքներից ելնելով՝ ՀՀ տարածքային կառավարման մարմիններն ավարտուն տեսքի բերված իրենց ՄԺԾԾ հայտերը ներկայացնում են ԷԲՊՆ՝ մինչև 2016թ. հունիսի 15-ը:
7. ԷԲՊՆ-ն՝ որպես գլխադասային մարմին, Ոլորտի գծով ավարտուն տեսքի բերված ՄԺԾԾ հայտերը ներկայացնում է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ մինչև 2016թ. հունիսի 22-ը:
8. ՀՀ տարածքային կառավարման մարմինների հետ տարածայնությունների առկայության դեպքում՝ կազմվում է համապատասխան արձանագրություն և սույն կարգի 5-րդ և 7-րդ կետերում նշված փաստաթղթերի հետ ներկայացվում է ՀՀ ֆինանսների նախարարություն: